

ՅՈՀԱՆԻՍԻ ՏԱՐԱԽՆԱՅԻՈՅ ԵՒ ԱՅԼՈՅ [ՊԱՏՃԱՌ ԾՆԵՂՈՅ*]

Յառաջին աւուրն ասաց Աստուած. «Եղիցի լոյս»¹. Եւ աստ Լոյսն ի Հաւրէ ի Կոյսն ծագեաց: Անդ զգգալի^{1*} խաւարն փարատեաց եւ աստ զիմանալի խաւար կռապաշտութեան փարատեաց: Փոխանակ Լուսոյ ճշմարիտ Լոյսն՝ էական Աստուածութիւն յերկիր ծագեաց, որպէս եւ Քրիստոս ասաց. «Ես եմ լոյսն աշխարհի»²: Եւ, փոխանակ առաջին աւուրն Հոգւոյն Սրբոյ շրջել ի վերայ ջուրցն, այսաւր միասնական Աստուածութիւն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ զուգապէս եկեալ ի վերայ ջուրցն Յորդանանու. Որդի՝ մկրտութեամբ, Հայր՝ ձայնիւ. «Դու ես Որդի Իմ սիրելի ընդ յոր հաճեցա»³: Զորոյ զձայնն ամենեքեան լսեցին եկեալքն ի մկրտութիւն Յովաննու՝ արդարք եւ մեղաւորք: Հոգին Սուրբ աղանակերպ երեւմամբ ի յերկնից հանգչէր ի վերայ էակցին Իւրոյ վկայելով բարբառոյն Հաւր, որ առ Միածինն, որ մկրտեցաւ ի Յովաննէ. ահա միասնական Երրորդութիւն գոլով ի վերա ջուրցն Յորդանանու:

Եւ ամենայն ջուրք, որ յաշխարհի սրբեցան եւ զաւրացան ծնանել ոչ անբան ձկունս եւ թռչունս, որք ի վերին աւդս խաղան սլացեալ, այլ մարդկան ազգ մկրտութեամբ շնորհին ծնանիլ վերստին թողցանելով յերկինս վերանալով խառնին ի դասս հրեշտակաց:

Տե՛ս զերկրորդ արարչութիւնս համեմատ առաջնոյն եւ զերագոյն գտեալ եւ աստուածատեսակ քան զառաջինն: Վասն այնորիկ ի միում աւուր տաւնեմք զծնունդն, զի Աստուած մարդացաւ ի Կուսէն, եւ յաւազանէն ծնանին մարդիկ աստուածացեալք: Իսկ Կոյսն ի սերմանէ Հոգւոյն Սրբոյ յղացեալ յայտ առնելով զՀոգին Սուրբ, որ ի Յորդանան, զոր Քրիստոս վասն մեր արինակի ընկալաւ ի մկրտութեան Իւրում, զի եւ մեք ընդունիցիմք ի մկրտութեան մեր: Վասն այնորիկ Յակոբ եղբայր Տեառն եւ Կիրեղ^{2*} Երուսաղէմի ի միում աւուր կանոնեցին՝ Յունուարի ի վեց զԾնունդն եւ զՄկրտութիւն, զի մի՛ բաժանեցի խորհուրդ Արարչին, այսինքն՝ ի ծննդէն Բանին Աստուծոյ մարմնացելոյ մկրտութիւն եւ ի մկրտութենէն՝ զծնունդն: Ոչ ապաքէն ըստ այսպիսի խորհրդեան ծնեալ մկրտին հաւատացեալք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ որդիք Աստուծոյ ծնեալք, որպէս Յովաննէս ասէ, այլ վասն ծննդեանն Քրիստոսի եւ մկրտութեան մի ծնունդ ասի ի Սուրբ գիրս: Աստուածաբան վկայէ ի վարդապետութեան երախայիցն ասացեալ. «Երիս ծնունդս գիտէ մեզ Բանն, որ ի մարմնոյ եւ ի

* Սկիզբը տե՛ս «Էջմիածին», 2007, հմր 9:

¹ Ծնդ. Ա 3:

^{1*} զսգալի:

² Յովհ. Ը 12:

³ Մտթ. Գ 17:

^{2*} Կուրեղ

մկրտությունն էլ յարությունն»⁴։ Ջայտքիկ Քրիստոս Ինքեամբ կատարեաց զմինն փչմամբն առաջին կենդանականաւն։ Եւ զմիւսն մարմնանալովն էլ մկրտութեամբն։ Իսկ զերրորդն՝ յարութեամբն, որով ինքն անդրանիկ յարարածս էլ ի բազում եղբարս էլ ի չարչարանս։ Առաջին ծնունդն Քրիստոս ի յորովայնի Կուսին ի Հոգւոյն Սրբոյ. փչումն առաջին էլ կենդանական, ըստ ազգաբանութեան էլ աստ եթէ՝ «Հոգին Սուրբ եկեցէ ի քեզ»⁵։ Առ որ Բանն առաքեալ շարժեաց զմարմինն ի յորովայնի Կուսին առ ի գոլ մարմին, քանզի ոչ ըստինքեան մարդկան ոչ ըստ առաջանալոյ աւուրց առ սակաւ սակաւ ստեղծագործիւր տէրունեան մարմինն։ Այլ իսկ էլ իսկ միանգամայն վկայէ հրեշտակն Յովսէփով. «Որդի Դարթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ, զի ծնեալն ի նմանէ ի Հոգւոյն Սրբոյ է»⁶։ «Ծնեալն» ասաց էլ ոչ ստեղծեալ։ Բարսեղ ի Ծննդեան ճառին ասէ. «Անուն դիցուք տաւնիս Աստուծոյ յայտնութիւն»⁷։

Իսկ երկրորդ ծնունդն առանց բաժանման, որ է մարմնանալն, այսինքն՝ զառաջ գալն ի Կուսէն էլ զմկրտիլն ասէ։ Ամաչեցէ Արտեմոն էլ յամալթ լիցի ժողովն Քաղկեդոնի, որք աշակերտեցան էլ նմանիք եղեն։ Քանի՞ եղանակաւ լուսաւորեալ է ճշմարտութիւն, էլ նոքա զարէն խաւարելոցն ոչ տեսանէն զլոյս։ Բազումք ի վարդապետաց մերոց ըստ տումարի արհեստից, որ երեք երեք ժամքն ի չորս ամն ի մի ար կատարի էլ զեղանակն յառաջ խաղացուցանէ էլ յերեսուն ամի զար ծննդեան էլ զմկրտութեան ի մի ար հանդիպեցուցանէ^{3*}, զի Յոհան Ոսկեբերան յաւուր ծննդեան էլ մկրտութեան Տեառն ի միում աւուր արտաքս քարշեցաւ։ Եւ թագաւորն Արկադէս ոչ եկն յեկեղեցին մինչեւ արտաքսեաց զՅոհան։ Եւ զՄկրտութեան արն Քրիստոսի տաւնին յայլ եկեղեցւոջ կատարեաց։ Վկայէ Սոկրատես յեկեղեցական շարագրածին. Սուրբ գիրք մի ար կանոնեցին սահման կատարեալ մկրտութեան էլ ծննդեան։ Բարսեղ ասէ ի Հաւատոց գիրքն, թէ մեծամեծքն էլ կարելորքն քրիստոնէից ոչ գրեցին, այլ աւանդութեամբ ունիմք էլ արինակաւ կատարեն, որք են այտքիկ՝ յաղաւթս կալ յարեւելս էլ մկրտութիւն առնել, աղ արհնել էլ ձեռնադրութիւն աստիճանաց։ Գիտեմք, զի յայտնեցաւ ի մկրտութեան, բայց ի ծննդեանն ընդէ՞ր թաքեաւ, ո՞վ բաժանողդ. Ոչ ապաքէն ծննդեամբն յայտնեցաւ երկնաւորացն էլ երկրաւորացս։ Աստուածաբան գոչէ. «Այժմ Աստուծոյ յայտնութեանս տաւն է, քանզի երեւեցաւ Աստուած՝ մարդ ծնեալ, էլ սկսանի. Քրիստոս ծնեալ լինի, էլ արհնութեան է արս»⁸։ Պարտ է վարդապետել բանիւ, էլ ոչ ասէ, թէ յայտնութեան է արս, թեպէտ էլ է, վասն զի «զծնունդն» գիտէ «յայտնութեան» ասել, զի յառաջնում աւուրն ասացաւ.

«Ի սկզբանէ արար Աստուած զերկինս»⁹. վասն զի երկնաւորն ծնաւ մերով բնութեամբ ի Կուսէն էլ նոյն աւուրն ջուրքն ժողովեցան, զի Հոգին Սուրբ որ «շրջէր ի

⁴ Տե՛ս Գրիգորի Աստուածաբանի՝ Խաւսք Մկրտութիւնն, ՄՄ, ձեռ. N 946, թ. 26ա։

⁵ Ղուկ. Ա 35։

⁶ Մտթ. Ա 20։

⁷ Տե՛ս «Երանելոյն Բարաղի եպիսկոպոսի Կապադովկացոց ասացեալ ի ծնունդն Քրիստոսի», «Հանդէս ամսօրեայ», 1968, էջ 419-38։

^{3*} հանդիպեցուցանէ։

⁸ Տե՛ս «Գրիգորի Աստուածաբանի Խաւսք ի յայտնութիւն Տեառն», ՄՄ, ձեռ. N 948, թ. 177աբ։

⁹ Ծննդ. Ա 1։

վերայ ջուրցն», ի Յորդանան աղանակերպ երեւեալ ի վերայ Քրիստոսի. «երկինք բացան», վասն զի Ադամ փակեաց եւ ձայն Հաւր վկայեաց վասն տերունեան մարմնոյն աստուածանալոյն, եւ զորդիս մարդկան որդեգրեաց մկրտութեամբ: Եւ այս ըստ արարչութեան աւուրցն արինակ եւ ըստ դարուցն եւթնհազար եկի. Առաջին դար ոմանք զԵնոքա փոխումն ասացին, բայց իմանի առաջին դար Աբելի արդարութիւն, եւ հաճոյակատար կամացն Աստուծոյ պատարագաւքն քան զամենայն մարդիկ եւ յեղբարէն զչար նախանձ կրեալ, որպէս Քրիստոս՝ ի հրէիցն: Եւ սպանումն Աբելի^{4*} արինակ Քրիստոսի եւ արեան հեղումն՝ արեանն Աբելի, որպէս ասաց Աստուած, թէ «Գոչումն արեան եղբար քո»¹⁰, ո՛վ Կային, «բողոքէ», եւ յարինակ արեանն գոչման Քրիստոսի ի հրէիցն, որ առաւել խաւսի քան զԱբելին. եւ՝ տարագրութեան եւ անիծից: Եւ երերումն եւ տատանումն հրէիցն յամենայն արարածս, եւ կուրացումն աչաց նոցա ըստ մարգարէին. «Խաւարեցին աչք նոցա, զի մի տեսցեն»^{*} արինակաւ Կայենի: Աբել առաջին անդրանիկ եղեալ ի մեռեալս եւ Քրիստոս՝ անդրանիկ յարութեան եւ վերանալոյն յերկինս, որ առաջնորդեաց մեզ ճանապարհ իւրով տնարէնութեամբն եւ համբարձմամբ լուսափայլ ամպաւք, որպէս Սէթ յԱռաջին դարուն եւ ծնունդք իւր կոչեցան որդիք Աստուծոյ:

«Ի յերկրորդում աւուր արար Աստուած զհաստատութիւն եւ զգրեղէն յարկն»¹¹, որ ոչ ի չորից նիւթոց է գոյացութիւն նորա, վասն զի Է (եւթներորդ) նիւթ ասացին զնա իմաստասէրքն:

Բայց եթէ վասն Է՞ր զահագին ջուրցն բնութիւն կառոյց ի վերա նորա, զի մի՛ հուր Աստուածութեան կիզցէ զերկիր: Եւ որպէս յերկրորդում աւուրն արար զնա, նոյնպէս եւ յերկրորդ դարուն եբաց զնա եւ ջրհեղեղան ապականեաց զերկիր, որ անջրպետեաց զվերին ջուրն եւ զներքին, զոր երկինք անուանեաց հոմանունաբար վերին յարկին հրեղէն երկնից զվերին աշխարհն անմահից, զի անհասանելի խորհուրդք են հրեշտակաց կարգաւորութեանց անհաս մտաց մարդկան: Նոյնպէս եւ անհասանելի էր հրեշտակաց խորհուրդն Աստուծոյ ի վերայ բնութեանս մերոյ, զոր առնել կամէր եւ արար ի մարդանալն Իւրում, յորոց վերայ զարմացան երկնայինքն, որպէս եւ գրեալ է. «Արգելաւ ծագումն վերին արփոյն ի ներքին աշխարհէ աստի»: Յերկրորդ աւուրս յայտնութիւնս Քրիստոս ծագեաց ասելով. «Ես եմ լոյս աշխարհի»¹²: Յերկրորդ դարուն Ենովք ի մահկանացու աշխարհէս փոխեցաւ յանմահութիւն ի վերին լուսեղէն աշխարհն՝ հրաւեր աւետեաց տալով ամենեցուն անդ ելանել: Եւ յերկրորդ աւուրս դարձեալ յիշատակ սրբոյն Ստեփանոսի կատարի եւ կանոն ի սուրբ մատրանն: Եւ սաղմոսն եւ առաքեալն յայտնէ զխորհուրդ աւուրն: Եւ Նախավկային ընթերցումն^{5*} ցուցանէ, թէ ոչ միայն ի Քրիստոսի մկրտութեան բացան երկինք, այլ եւ յՍտեփանոսի արեան մկրտութեան: Եւ ճանապարհ հորդեցաւ մեզ, զի ուսցուք, թէ մկրտութիւնք եւ

^{4*} Այստեղ և այլուր «Հաբել»:

¹⁰ Ծնդ. Դ 10:

^{*} Սղմ. ԿԸ 24:

¹¹ Ծնդ. Ա 7:

¹² Յովհ. Ը 12:

^{5*} Ընթերձումն:

չարչարանք բանան մեզ գերկինս: Այս աղագաւ Քրիստոս ի մկրտութեան եբաց գերկինս եւ Ստեփանոս՝ ի չարչարանքն եւ սարկաւագին բացան ներքին երկինքն: Առաջին վկայն Քրիստոս զառաջին երկինքն եբաց արարածոցս: Երկրորդ վկայն գերկրորդ երկինս եբաց առաջի մարդկան, զոր փակեաց Ադամ: Յառաջին աւուրն ի Քրիստոս մկրտութեամբ բացան երկինք առաջին, որ փակեցան Ադամայ: Յերկրորդ աւուրն յՍտեփանոսի նահատակութեան բացան երկրորդ երկինք ծննդոց Ադամայ: Յառաջին աւուրն արարաւ երկինք վերին յառաջին աւուր տաւնիս բացան վասն բազում պատճառանաց: Յերկրորդ աւուր գործեցան երկինք՝ յերկրորդ աւուր տաւնիս բացան: Երկրորդ երկին Բնակութիւն հրեշտակաց ասի, որպէս Ստեփանոս հրեշտակակերպ տեսլեամբ յանդիմանէր զհրեայսն: Բացեալ գերկինս տեսանէր զկերպարանս Հաւր ի կերպին Ադամա, բայց թէ զի՞նչ յիշատակի Ստեփանոս յերկրորդ աւուր ծննդեանն եւ յարութեան: Քանզի սովորութիւն է. ուր թագաւոր է անդ եւ զինուորին երեւել: Վասն այնորիկ յիշատակ սրբոյն Ստեփանոսի կատարի զկնի յայտնութեան եւ յարութեան որպէս զկնի հին Ադամայն առաջին մարտիրոս Աբել երեւեցաւ: Վասն զի է Ստեփանոս արինակ հին Աբելի, պարտ էր զկնի մեծ Քահանայապետին եւ սարկաւագին մտանել ի Սրբութիւն սրբոցն:

Առաջին պատարագ Քրիստոս եւ երկրորդ պատարագ Ստեփանոս՝ կարապետ ամենայն մարտիրոսաց գնդին, քանզի սարկաւագ ձեռնադրեցաւ մեծ Քահանայապետին մերոյ Քրիստոսի յառաքելոց անդի: Արդ, յայտնեալ երեսացն Աստուծոյ Հաւր ճշմարիտ Քահանայապետն մեր Յիսուս, պարտ էր եւ սարկաւագին մերոյ կալ առաջի նորա ի սպասաւորութիւն: Եւ երկրորդոյս, զի առաջին զինուոր Քրիստոսի Ստեփանոս ընտրեցաւ^{6-7*} ի մերմէ բնութենէս վկայեալ անվախճան թագաւորութեան նորա երկնի եւ երկրի: Եւ ահա, յերեւել Թագաւորին պարտ էր եւ զկնի նորա զինուորին ընթանալ: Եւ երկրորդ, զի խոստումն Փրկչին մերոյ, որ ասաց, թէ՝ «Ուր Եսն եմ անդ եւ պաշտանայն Իմ եղիցի»¹³, այսինքն՝ ի փառս եւ ի պատիւ Աստուածութեան Իւրոյ պատշաճ էր սիրելեաց նորա մասնաւոր ինչ ընդունել: Քանզի պատուելով ամենայն քրիստոնէից զյայտնութիւն Փրկչին մերոյ՝ եւ ծառայն ընդ Տեառն պատուի, եւ Նախավկա անուամբ պատուի ընդ յառաջին վկային ճշմարտի եւ խաչելոյն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Զի զմեծարանս ծառային ընդ Տեառն տեսեալ ամենեքեան քաջալերեցին յաւժարութեամբ, դիմեցեն զհետ նորա՝ հասնել այնմ սքանչելի եւ աստուածային պատուոյն: Բայց զարմանալի է չորրորդն^{8*}, զի ի յանցանացն Ադամա Աստուծոյ տեսութիւն փառացն ծածկեցաւ ի դիմաց նորա, եւ փակեցաւ նմա երկինք, եւ ամենայն ծննդոց նորա յետ նորա, զորոյ զնմանութիւն եցոյց բացումն հաստատութեան:

Արդ, յիջանելն Աստուծոյ վասն մարդկային բնութեանս ի վեր տանելով յիւր աստուածային բարձրութիւն: Արդ, թեպէտ իջմամբ Որդի Աստուծոյ յերկնից միացոյց զԻնքն ընդ մերոյ բնութեանս, կատարեաց զտառս մարգարէիցն, ըստ Իւր ի Խաչին

^{6-7*} ընդրեցաւ:

¹³ Յովհ. ԺԲ 26:

^{8*} չորրորդն:

ասելոյն. «Ահա ամենայն ինչ կատարեցան»¹⁴, որ վասն Իմ լուսոյ մարգարէքն գրեցին: Եւ ել յերկինս առ Հայր եւ մերոյ բնութեանս բացաւ փակումն երկնից: Այլ սակայն ի մեր տկար եւ յաղթահարեալ բնութենէս պարտ էր վեր երեւել քաջութեամբ արիանալ եւ բանալ զմուտ երկնից, որ փակեցաւ մեղկութեամբ Ադամայ: Եւ այսմ սկիզբն հաստակութեան ի մեծէն Ստեփանոսէ եղեւ: Զի ի ժամ կատարմանն իւրոյ աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ. «Տեսանեմ զերկինս բացեալ»¹⁵ յայնմանէ յայտ է, թէ փակեցան յանցանաւքն Ադամայ: «Տեսանեմ զՈրդի մարդոյ, զի կայ ընդ յաջմէ Աստուծոյ»¹⁶. այն իսկ, որ տեսութիւն ծածկեցաւ յերեսացն Ադամայ վասն մեղաց նորա, նոյն երեւեցան Ստեփանոսի իսկական փառք Աստուածութեան, զոր ոչ ոք ի մարդկանէ ետես: Այսպէս, յայտնի տեսութեամբ զփառս Աստուծոյ մինչեւ ի մեծն Ստեփանոս: Արդար, յիրաւի յերկրորդում աւուրն պատուի ընդ Տեառն իւրում, զի երկրորդ բացումն արար նա իւրով նահատակութեամբն՝ որդոց մարդկան մտանել յերկինս: Քանզի զկնի համբառնալոյն Փրկչին մերոյ յերկինս եւ համբառնալոյ գործունս ի վեր առաջին մարդ սա էլ զկնի Քրիստոսի եւ զամենեսեան յորդորեաց զհետ նորա յաւժարութեամբ սրտի մտաւք:

Նախ զառաւելութիւն երից աւուրցն ասացից: Երից աւուրցն լոյս, որ յարարչութեան, զԵրրորդութեան լոյսն նշանակէր՝ միով բնութեամբ եւ երիս անձնաւորութեամբ որոշեալ: Որպէս լոյսն երից աւուրցն լոյս եւ լոյս եւ լոյս. մինն ըստ միոյ բնութեան գոյացեալ լոյս, ըստ առաւաւտուն տարածեալ եւ ժողովեալ յերկուն յերիս աւուրս աննիւթ եւ անարեգակն: Իսկ առանձինն խորհուրդ երրորդ աւուրն, զի յերրորդում աւուրն ծով սահմանեցաւ: Եւ յերրորդում աւուրն ասաց Աստուած. «Հանցէ երկիր զբանձար ամենագան ծաղկաւք»¹⁷: Եւ փոխանակ ծաղկանցն անուշահոտութեան վարդատեսակ արիւնն սուրբ վկայիցն մանկանցն Բեթղեւեմի նախընծայ ^{9*} Հաւրն երկնաւորի: Զի ծաղկաձեւ ցաղ արեան նոցա զարդարեաց զեկեղեցի յաղագս տղայացելոյն Քրիստոսի վասն մեր, որ հանդերձեալ էր Իւրով արեամբն կենագործել զմեզ, եւ՝ ծառ բազմատեսակ յոգնագան պտղաւք, եւ՝ դրախտ ամենապայծառ եւ՝ լուսագեղ, սաղարթաւոր, անապական տնկաւք, եւ՝ գեղեցկութիւն, եւ՝ փափկութիւն զանագան պտղաւք զարդարեալ, որ ոչ գտանի յերկրի: Եւ այս յերրորդ ^{10*} աւուր տաւնիս՝ յերեւել Փրկչին մերոյ Աստուծոյ ծովացեալ մեղաւք մարդկան ցամաքեցաւ: Եւ փոխանակ դրախտին՝ եկեղեցի, եւ փոխանակ ծառոյն կենաց՝ Խաչն կենդանարար պտղովն Քրիստոսի: Եւ ծառք պտղաբերք եւ գեղեցիկք՝ առաքեալքն եւ մարգարէքն եւ աւետարանիչքն, եւ ծառն զիտութեան բարոյ եւ չարի՝ արքինակ աստի կենաց: Եւ որպէս Ադամ ճաշակեաց ի ծառոյն զիտութեան եւ ոչ արժանացեալ ծառոյն կենաց, այնպէս եւ՝ որ մեղաւք մեռանին, անհնար է նոցա ճաշակել յաւիտենից կենացն: Եւ քանզի հոտ անուշ բուրէր ի դրախտէն, այսպէս եւ Պաւղոս պարծի ասելովն. «Հոտ

¹⁴ Յովհ. ԺԹ 30:

¹⁵ Գործք Ժ 11:

¹⁷ Ծնդ. Ա 12:

^{9*} նախընծա:

^{10*} յերրորդ:

անուշ եմք առ Աստուած»¹⁸: Մտորն զդրախտն նշանակե, եւ Բեթղեմ՝ զտունկքն, եւ բողբոջն, որ ի նոսա՝ զմանկունսն Բեթղեմի: Եւ դարձեալ Նազարեթ արինակ դրախտին եւ Քրիստոս՝ Ադամայ: Եւ որպէս Քրիստոս փախստական եղեւ ի Նազարեթ յԵգիպտոս, այսպէս եւ Ադամ վասն յանցանաց փախստական եղեւ ի վայելչական դրախտէն: Եւ սողացաւ յԵգիպտոս յերկիր նզովից եւ անիծից, որ խաւար եւ մէզ ասի: Իսկ գալն յԵգիպտոսէ ի Նազարեթ նշանակե զդարձն մեր ի դրախտն, ի հայրենի գաւառն, որ Քրիստոսի մարդեղութեամբն եղեւ, զի անդ էր մաքսորն Քրիստոս: Եւ Նազարեթ մաքրութիւն ասի, եւ Նազովին՝ գաւազան * : Իսկ երթալն Քրիստոսի փախստեամբ յԵգիպտոս, որպէս Մովսէս՝ յերեսաց փարաւոնի ի Մադիամ: Արդ, ի մտանելն Քրիստոսի յԵգիպտոս քաղաքն Հերմապոլիս, զոր Մովսէսն շինեաց եւ կոռքն, որ ի վերայ պարսպին, անկեալ փշրեցան: Եւ դեսպանքն, որ ի հնդկաց եկեալ էին անդ, եւ Փիլոնի աշակերտն երիտասարդ անդ պատահեցաւ, եւ երթեալ յԱթենս պատմեաց: Եւ նոքա հիացեալ զարմացան, թէ ո՞վ է այն Աստուածն, որ քան զամենայն կոռոս զարաւոր է: Եւ վասն այնր հաստատեցին զբազինն «անծանալթի Աստուծոյ»¹⁹ ասելով եթէ բարի ոչ առնէ՝ զպատուհասն արգելու: Եւ պատգամաւորքն գնացին ի հնդիքս եւ պատմեցին զսքանչելիսն եւ ի քարոզել առաքելոյն անդր նոքա ծանալթ գովով իրին արագ հաւատացին, որպէս ասէ թէ հնդիկք յառաջագոյն ձեռնտու լիցին առ Աստուած: Իսկ ասելն մարգարէին Երեմիա. «Ձայն գուժեաց ի Հռամա»²⁰: Զի Նաբուգոդոնոսոր արինակ էր Հերովդէի, որ զմանկտին կոտորելոց էր, խորհուրդս յայս հայէր: Եւ զի՞նչ է, որ ասէ. «Հռաքել լայր գորդիսն եւ ոչ միթարէր»²¹, զի Հռաքել ի ծնունդս մեռաւ եւ թաղեցաւ յանապատին Քաբրադաք ²², եւ Բեթղեմի մանկանցն, եւ քանզի ի ծնանելն մայրն մեռաւ անդ: Եւ աստ ի ծնանել մանկանցն փութապէս մոլորեցան: Զուգահաւասար էր վիշտն: Վասն այնր մի անուամբ ասէ զնոսա եւ զնա: Բայց նշանակէ Հռաքել զհեթանոսաց եկեղեցի, որ լայր գորդիսն, որ ոչ ծնան աւագանան, այլ ի խաւարի եւ ի ստուերս մահու շրջէին, որպէս ասէ Եսայի. «Ի նեղութեան եւ յանձկութեան»^{11*} առիւծ եւ կորիւն առիւծու»²³: Եւ առիւծ անուանէ զԻսահակ եւ զՅակոբ, եւ կորիւն՝ զՍամուէլ եւ զմարգարէսն, որ ի նեղութեան եւ յանձկութեան էին, այսինքն՝ ի վիշտս եւ ի նեղութիւնս: Զի ծնունդք իծից խաչելոց էին զՔրիստոս, այսպէս եւ եկեղեցի լայր զմանկունս իւր, զի ոչ էին ծանուցեալ զՔրիստոս: Եթէ զի՞նչ է յերկեմենից եւ ի խոնարհ, քանզի եհաս Հերովդէի հրաման ի Հռոմ գնալ, եւ երկու ամ յամեաց եւ յորժամ դարձաւ, հրամայեաց կոտորել զմանկունսն, բայց ասի Բան, թէ եւթանասուն ^{12*} եւ եր-

¹⁸ Բ Կորնթ. Բ 15:

* «Նազարեթ, Նազովին = գավազան = շառավիղ» ստուգաբանությունը տե՛ս Մեսրոպ արքեպս. Մութաֆեան, «Նազովրեցի» որակումը հնախոսութեան լոյսի տակ, «Շողակաթ» եկեղեցական, մշակութային, բանասիրական հանդես, Ստանպոլ, 1995, էջ 5-11:

¹⁹ Գործ. ԺԷ 23:

²⁰ Երեմիա ԼԱ 15:

²¹ Մտթ. Բ 18:

²² Տե՛ս Ծնդ. ԼԵ 16:

^{11*} յանձկութեան:

²³ Եսայի Լ 6:

^{12*} ււթանասուն:

կույք էին մանկունքն, զոր կոտորեաց Հերովդէս: Եւ փոխանակ նոցա զեւթանասուն եւ երկու առաքեալսն ընտրեաց Աստուած: Իսկ հոգիք նոցա ոչ ի դժոխս գնացին ընդ յայլ արդարոցն, այլ իբրեւ զերամս աղանեաց յերկինս թռեան՝ նշանակելով զամենայն հոգիս արդարոց, որպէս ասէ առաքեալ, «ամպաւք յառաջ Տեառն»²⁴: Իսկ մեղաւորք, ասէն, մնան յերկրի:

Ի յերրորդ աւուրն ծննդեան եւ յայտնութեան Քրիստոսի զարդարեաց զեկեղեցի ի ձեռն կատարման տղայոցն վայել էր տղայութեան Քրիստոսի տղայոց լինել վկա, եւ որ տղայաբոյսք եւ կանաչագեղք համեմատ նոան ծաղկանց վարդափթիթ կարմրութեամբ արեան տղայոցն բացափայլէին ծաղիկք յոգնագան եւ բազմերանգք, որ բերէին զմանութիւն թագի ծիրանագգեաց թագազնեաց համեստ մատաղ տղայոցն*:

Իսկ յերրորդ դարուն եկն ջրհեղեղն եւ ապականեաց զերկիր վասն մեղաց մարդկան եւ ողորմութեամբն Աստուծոյ ցամաքեցաւ, եւ դարձեալ զարդարեցաւ երկիր իբրեւ զառաջինն, որ նշանակէր զապականեալ բնութիւն մարդկան վասն յանցանացն Ադամա, որ դարձեալ զարդարելոց էր մարդեղութեամբն Աստուծոյ, որ կոչեցաւ երկրորդ Ադամ՝ լաւագոյն եւ պայծառագոյն քան զառաջին:

Յերրորդ աւուրն կանոն ի մատրանն կատարի, որ է Կաթողիկէն մեծ, զի արինակ է վերնախորան արքայութեան, ուր Սուրբ Երրորդութեան ասի բնակիլ: Ի միւս անգամ զալստեանն ամենայն սուրբք ընդ նմա լինին: Եւ սաղմոս աւուրն յառաջ քան զյաւիտեանս ծնեալն ի Հաւրէ առանց մաւր, այսածին տղա Յիսուս ի մաւրէ առանց հաւր տղայացեալ վասն մեր եւ ի տղայոց վկայեալ: Եւ առաքեալ վկայէ. «Բազում մասամբք»²⁵ եւ ցո՞ երբեք ասացի հրեշտակաց. «Նիստ ընդ աջմէ Իմմէ»²⁶, որ յառաջ քան զյաւիտեանս ի յարգանդէ ծնաւ անսկիզբն տղա եւ Տէր Յիսուս: Վկայէ Աւետարանն. տղայակոտոր տղայացելոյն ի Կուսէն փախուցելոյն յԵգիպտոս, երկրորդ Ադամ երեքաւրեա յարութեամբն սկիզբն արարչագործութեան եղեւ, Խաչիւն եւ եկեղեցեաւ փրկեաց զանասնացեալ եւ զգազանամիտս ազգ մարդկան եւ շնորհաւք արար որդիս Աստուծոյ՝ զմարմնականն ի հոգեւորն փոխարկեալ:

Չորրորդ աւուրն արարչութեան զլոյս երից աւուրցն, որ ցան եւ ցիր ունէր զբնութիւն, ժողովեաց եւ ելից ի տարր արեգականն, եւ արեգակն անուանեցաւ, այսինքն՝ լուսո ակն: Ըստ երանելոյն Բարսղի ի Վեցաւրեա գիրսն, թէ՝ «տարր արեգականն կազմեցաւ լինել աման առաջին լուսոյն»²⁷, որ արար զարեգակն եւ զլուսին եւ զաստեղս պարուց: Եւ արեգակն ընդ յառաւաւտն ստեղծ եւ զլուսին՝ ընդ յերեկս աւուրն: Արդ, լոյսն զերագանցիկ նշանակէ զՔրիստոս, եւ տարբերէն ամանն բերէ զարինակ Կուսին, զի որպէս զլոյսն ժողովեաց ի տարր արեգականն, այսպէս եւ Քրիստոս՝ յարգանդ Կուսին լոյս ճշմարիտ բաւանդակեցաւ: Արդ, ի լինել արեգականն

²⁴ Ա. Թեսալ. Դ 16:

* «Ոսկեփորիկ» ժողովածուի մեջ հատվածս ունի հետևյալ բնագրային պատկերը. «բերէին զմանութիւն թագի թագազանց», ՆԲՀ, Ա, էջ 788(թագազան):

²⁵ Եբր. Ա 1:

²⁶ Ղուկ. Ի 42, Գործք Բ 34, Եբր. Ա 13:

²⁷ Տե՛ս **Բարսեղ Կեսարացի**, Յաղագս Վեցաւրեայ արարչութեան, աշխատ. Կիւմ Մուրադեանի, Երեւան, 1984, էջ 172:

զարդարեցաւ երեսս երկնի աստեղացն պայծառութեամբ, որպէս դէմք երկրի՝ ի ծաղկաւետ վայելչութեամբ, որով պարտիմք իմանալ, թէ արժան է մեզ առաքինութեամբ կեալ, որ ըստ մարմնոյ կատարին վասն մարմնոց մերոց, որ յերկրէ առաւ: Ապա զաւրացեալ զգենումք զգարդ առաքինութեան, վասն հոգւոյ եւ մտաց մերոց, որ յերկնային բնութենէն յերկրայինս խառնեալ միացաւ: Այսպէս, իմանալ Բանին Աստուծոյ ընդ մարմինն, ընդ ծագս տիեզերաց երեւեցան արդարք եւ սուրբք: Եւ զարդարեցաւ երկիր ամենայն առաքինագործ անձամբք: Եւ աստեղացն պայծառութիւն ունի արինակ զԳաբրիէլի աւետարանութիւն առ Կոյսն, եւ արեգակն՝ զմկրտութիւն: Զի որպէս աստեղքն սակաւ ինչ ճաճանչաւոր լուսովն զգիշերն լուսաւորեն, նոյնպէս եւ Գաբրիէլի աւետիքն զգիշեր կենցաղոյս իբրեւ զաստեղս ոմանս զնշմարանս լուսոյ ծագեալ լուսաւորեցին, ասացեալ է աւանդութեամբ առաջնոց սուրբ հարցն:

Յաւուր չորեքշաբաթու յազդեցութենէ սատանայի խաւսեցաւ աւձ ընդ Եւայի, որոյ զբանն խմոր չարութեան ընկալաւ եւ զբոլոր բնութիւնս մեր ապականեաց: Վասն որոյ պարտ է առաջնոյ չարութեան ընդդէմ երեւել եւ գերագոյն բարութիւն: Եւ դարձեալ ի ձեռն երկրորդ կնոջն վերստին նորոգեալ բնութեանս մերում: Վասն այսորիկ եւ յայս չորրորդ^{13*} աւուր եղեալ յիշատակ աւետեաց Աստուածածնին մարդիկ ի բարեաց ի չարիս եւ ի կենաց ի մահ անկան պատրանաւք աւձին: Այսպէս ի ձեռն երկրորդ Կուսին մարդիկ ի չարեաց՝ ի կատարեալ բարութիւն եւ ի մահուանէ ի կեանս փոխեցան մարդեղութեամբն Քրիստոսի Աստուծոյ մերոյ: Ի չորրորդ դարուն երեւեցաւ այր մի Աբրահամ պայծառ հաւատով քան զլուսաւորս երկնից: Յաւուր չորեքշաբաթու եկն առ նա եւ ետ աւետիս վասն Իսահակայ եւ նկարեաց զիւր ծնունդն ի գաւակէ նորա: Եւ ի չորեքշաբաթու էջ առ Կոյսն: Եւ ի նոյն դարու տուաւ զիւր արինացն ի ձեռն Մովսէսի եւ խառնեցաւ լոյս հրամանացն Աստուծոյ ընդ նիւթ գոյութեան մարդկան, որպէս լոյս երից աւուրց՝ ընդ նիւթ արեգականն եւ այլոց լուսաւորաց: Արդ, Աբրահամ զՀայր նշանակէ եւ Իսահակ՝ զՔրիստոս եւ Սառա՝ զԿոյսն: Եւ ծեր երեւեցաւ Գաբրիէլ հրեշտակապետն առ Կոյսն: Եւ յորժամ այնմ զնա ընդելացոյց, եւ նա զողջոյնն ընկալաւ, վասն զի հրեշտակապետ էր, որ ընդ յառաջին կնոջն խաւսեցաւ: Արդ, փոխանակ հրեշտակապետի հրեշտակապետն եւ փոխանակ ադամածին կուսին՝ սուրբ Կոյսն: Զի Աստուած ի չորրորդ աւուր ժողովեաց զսփիւռ լոյսն եւ երեւեցաւ արեգակն: Եւ ի չորրորդ աւուրն լոյսն անոլորտ ժողովեցաւ ի մարմինն, որ ծագեցաւ ի Կուսէն, յորում բաւանդակեցաւ անբաւանդակելի լոյսն ի Հաւրէ եւ ի Ժամանակի ծննդեան երեւեցաւ: Զոր արինակ լուսինն առաւել քան զպարս աստեղաց լուսաւորէ զգիշերն, այսպէս եւ ծնունդն Քրիստոսի առաւել փայլեաց ի խաւար կենցաղոյս: Քանզի աւետիսն Գաբրիէլի եւ որպէս ի գալ լուսոյ ճառագայթիցն արեգականն ամենայն մթացուցիչ խաւար հալածեցան, այսպէս եւ մկրտութիւն Քրիստոսի զխաւար մեղաց փախստական արար եւ ամեներջանիկ լուսովն զմեզ պայծառացոյց եւ զանկեալն Ադամ կանգնեաց^{14*}: Գեղեցիկ են աստեղացն պարքն եւ ծագումն նոցա պայծառութեան, այլ ի ծագել արեգականն ոչ երեւին, այսպէս եւ ծագումն լուսոյ ծննդեանն Քրիստոսի ի Կուսէն

13* չորրորդ:

14* Կանկնեաց. այսպէս եւ այլուր:

զաւետիսն ընդ յինքեան փակեաց՝ ոչ ի բաց բառնալով, այլ ինքեամբ կատարելով, եւ որպէս Կաթողիկէն ընդ յինքեան ունի զփառսն Սիոնի եւ զյարութեան եւ զայլ եկեղեցեացն, նոյնպէս եւ ծնունդն Քրիստոսի՝ զաւետիս եւ զմկրտութիւն: Եւ մեծապատիւ խորհրդով յառաջին աւուր տաւնին յայտ առնեն աւուրն սաղմոսքն եւ ընթերցուածքն^{15*}: Բայց ընդէ՞ր ոչ տաւնեմք զաւետիսն, զի որպէս խաչելութիւն եւ թաղումն ընդ յարութեան փակեալ կան, այսպէս աւետիքն եւ ծնունդն՝ ընդ մկրտութեան: Եւ ոչ է պարտ մեզ զառաւելագունէն զանց առնել եւ զնուագն ըմբռնել: Չորրորդ աւուրն կանոնն ի Սիոն առանձնացեալ խորհրդաւորեցաւ յոյժ գեղեցիկ եւ ի դէպ: Զի աւետիք Քրիստոսի մարդեղութեան ի մարգարէսն էր, զի Սիոն՝ ամբողջ Դաւթի յառաջին հիմունս եկեղեցւոյ, որ ի հնումն էր, զոր խորագետն Պաղոս. «Ստուեր, ասէ, հանդերձելոց բարեացն առ աւետարանիս բարեացն ճշմարտութեան»²⁸: Եւ պարտ է ճշմարտութեան յառաջագահ լինել քան զստուերին, ըստ Պաղոսի, զորս եղ Աստուած յեկեղեցւոյ այս են. նախ զառաքեալս վասն ճշմարտութեան եւ շնորհին առաւելութեան: Երկրորդ՝ զմարգարէս՝ վասն ստուերին, զի թէպէտ յառաջ էր աւետիսն քան զծնունդն, որպէս մարգարէքն քան զառաքեալսն, այլ պատուով եւ ճշմարտութեամբ առաքեալքն առաջինք: Նոյնպէս ծնունդն քան զաւետիսն, վասն այնր զառաջին կարգն ընկալաւ ծնունդն Քրիստոսի ի հարցն եւ ի վարդապետացն, եւ Յակոբոսէ Տեառնեղբարէն, որ կարգեաց զընթերցուածն, զի աւետիքն առանց ծննդեանն ոչ ունէր կատարումն, վասն այսորիկ ոչ տաւնելի է, զի Կոյսն, որ աւետարանեցաւ, խաւսեցաւ եւ Յովսէփ տրտմեցաւ: Այսր աղագաւ մինչեւ ծնունդն կատարի ապա տաւնէ զաւետիսն, նոյնպէս նախ զծնունդն եւ ապա զաւետիսն տաւնեմք, որ կանոնեցաւ ի կաթողիկէին՝ ի ստորեւ ունեւորով զաւետիսն ի Սիոն. զի Սիոն խոնարհ է փառաւք քան զայլ եկեղեցիսն, վասն այսորիկ ստոր իջի կանոնն ի Սիոն, զի աւետիքն առանց ծննդեանն ոչ էր կատարեալ եւ սաղմոսն երդումն առ Դաւիթ. «Ի պտղոյ որովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա»²⁹, եւ եթէ՝ «Յառաջ քան զարեւ ծնա զքեզ»³⁰. զհայրական ծնունդն ասէ: Եւ յայտ առնէ ընթերցուածն ի գաղատացւոց թղթին ^{16*}, «Ժառանգ տղայ է, եւ եթէ եմուտ ընդ յաւրինաւք, զի զաւրինաւորսն գնեսցէ եւ ի լրման ժամանակի առաքեաց Աստուած զՈրդի իւր»³¹: Իսկ աւետեաց Աւետարան Ղուկա «Յամսեանն վեցերորդի»³². յայտնի կացուցանէ զհին աւետիսն Սիոնի մարգարէաւքն կատարելով յայտնութեան:

Ի հնգերորդում աւուր արարչութեան հրաման առին ջուրք բխել զբազում զանազան կենդանիս եւ զձկունս եւ զթռչունս աւդաւհերձիկս, որ սլացեալ շրջին յաւդս, որպէս ասաց Աստուած. «հանցեն ջուրք զեռունս կենդանիս»^{*}: Ի հինգերորդ դարուն մկրտեաց Աստուած զծոդովուրդն յամպն եւ ի ծովն ^{**}, եւ մերձեցոյց ի լեռն սինեա-

^{15*} ընթերձուածքն. **այսպէս եւ այլուր**:

²⁸ Եբր. Ժ 1:

²⁹ Սաղ. ՃԼԱ 11:

³⁰ Հմմտ. Սաղ. ՀԱ 17:

^{16*} Թխտին:

³¹ Գաղ. Դ 4:

³² Ղուկ. Ա 26:

^{*} Ծնդ. Ա 20:

^{**} Հմմտ. Ա Կորնթ. Ժ 2:

կան ի հանդիպումն Աստուծոյ: Եւ նոյն դարուն Դաւիթ զլեառն Սիոն ամրացոյց պատ-
րաստեաց թագաւորութիւն, յորում ձգեաց զամենայն սրբութիւն խորանին, որ ի Սել-
վամ կարգեցաւ, զոր ի տաճարն դարձոյց Սողոմոն, զոր շինեաց: Եւ ի նոյն դարուն
Մովսէս հրամանաւ Աստուծոյ աւագան կանգնեաց ի լուացումն քահանայիցն ի մար-
մնաւոր սրբութիւն եւ զսեղանն հացի եւ զհացն նուիրաց: Ի հինգերորդ դարուն պատ-
ճառ եղև բարձրանալոյ աստուծաշնորհեան տունն Իսրայէլի: Որք զերծեալք յնկղ-
մանէն^{17*} բաբելացոց՝ թռուցեալք ելին ի բարձրութիւն Երուսաղէմի՝ երգել զերգս
Տեառն ի նորոգութիւն երկրորդ տաճարին ի ձեռն Զաւարբաբելի շինածոյն, վասն զի
զհինգերորդն ի Ձիթաստանեաց լեառն տանէ եկեղեցի: Իսկ յորժամ ստուեր արինա-
ցն մերկանայր եւ ճշմարտութիւն թագաւորէր, պայծառագոյն փայլէին շնորհք Սուրբ
Հոգւոյն աւագանաւ մաքրութեամբ: Այսպէս Քրիստոս ի հինգերորդ աւուր մեծի
հինգշաբաթոջն ի նոյն լերին Սիոնի սրբոյ նորա, որ ասաց. «Ես կացի թագաւոր ի
նմանէ ի վերայ լերին Սիոնի սրբոյ նորա»³³, սկսաւ զխորհուրդ աւագանին լացմամբ
ոտից առաքելոցն ի վերնատանն խորհրդոյ մկրտել ի հուր եւ ի հոգի, որ արինակ էր
զամենայն հաւատացեալս երկնաթոփչս առնելով ի ջրոյ աւագանէն: Եւ զհնգեակ մե-
ռելութիւնս մերոյ բնութեանս, որ ի մեղաց, անդ ի վերստին կենդանացուցէ՝ նորոգե-
լով աստուածային կենդանութեամբն ի ձեռն մկրտութեան շնորհին: Քանզի իջմամբ
Աստուծոյ ի ջուրն զաւրացան ջուրք աշխարհիս՝ ծնանելով ոչ անմիտ թռչունս յաւուս
վերինս, այլ մարմնաւոր բնութիւնս մարդկան վերստին ծնանելով սուրբ աւագանաւ,
որք թելաբոսեալք շնորհաւք Սուրբ Հոգւոյն, վերացեալք բարձրացան եւ խառնեցան
ի գունդս սրովբէից՝ մկրտեալ աստուածանան: Եւ ի Սիոնէ ի վերին Սիոն ի լեառն Աս-
տուծոյ եւ ի քաղաք Թագաւորին մեծի: Վասն այսորիկ ի Ձիթենեաց լեառն կատարի
կանոն, զի զՀոգւոյն Սրբոյ աւծումն յայտնէ ձիթենին. եւ զլոյս մկրտելոցն, որք լուսա-
ւորեցան ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ: Արդ, յառաջին աւուրն ընդ տատրակսն եւ
ընդ յաղանիսն գոյացան սողունք, որպէս ընդ յերամս առաքելոցն՝ Յուդա մատնիչ, որ
իբրեւ զաւճ դարանակալ պատրաստեալ ունէր զթիւնսն հարկանել զՔրիստոս: Եւ
ըստ արինակի մկրտելոցն յամպն եւ ի ծովն եւ յերկնային լեառնն: Յուցանէ մեզ լեառ-
նն զերկինս փոխանակ եկեղեցւոյ որպէս մարգարէն ասէ. «Մերձեցարուք ի լերինս
յաւիտենականս»³⁴: Եւ Դաւիթ. «Համբարձի զաչս իմ ի լերինս եւ լուաւ ինձ ի լեառնէ
սրբոյ իւրմէ»³⁵: Եւ սաղմոս աւուրս «Բարձր արարէք զՏէր Աստուած մեր»³⁶: Եւ առա-
քեալ. «Մատուցեալ էք ի լեառն Սիոն»³⁷: Աւետարան, «Յարուցեալ Մարիամ գնաց ի
լեառնակողմն»³⁸, ընդ իւր տանելով զմեզ Քրիստոս ի վերին քաղաքն: Ձի ի ձեռն առա-
ջին կնոջն դաշտացաւ բնութիւնս մեր, եւ կոխան եղև թշնամոյն, եւ հինգ զգայու-
թեամբք մեռաք յաստուածային կենդանութենէն: Եւ չարութիւն սատանայի լեառնա-

17* յընդմանէն:

33 Մաղ. Բ 6:

34 Միքիէ Բ 9:

35 Մաղ. ՃԽ 1:

36 Հմմտ. Մաղ. ԺԷ 47, ԿԳ 8:

37 Եբր. ԺԲ 22:

38 Ղուկ. Ա 39:

ցաւ, եւ բարձրացաւ ի վերա որդոցն Ադամայ, ըստ այնմ, թէ՛ «Ո՞վ ես դու լեառն մեծ ընդդէմ Զաւրաբաբելի»³⁹: Վասն որոյ պարտ էր ընդդէմ հակառակին հակառակ ինչ լինել, եւ ի ձեռն երկրորդ կուսին Մարիամու դարձեալ զաւրանալ բնութեանս մերոյ եւ կոխել զկոխիչս մեր: Այսմիկ սկիզբն ի Տեառնէ եղեւ, որպէս ասէ. «Եկն եղբարորդին իմ վագելով ի վերա լեռանց եւ խաղալով ի վերա բլրոց»⁴⁰: Եւ ասէ առ անմենեսեան. «Ետու ձեզ իշխանութիւն կոխել զաւս»⁴¹, այսինքն՝ զսատանա, «եւ զկարիճ»՝ զգաւրս իւր, քանզի, արդ, վերացաք եւ բարձրացաք ոչ ի լեառն շաւշափելի, որպէս Մովսէսն այն ի հնումն, այլ յերկնայինն եւ յաստուածայինն եւ յիմանալի բարձրութիւն յանհասն եւ յանաղիկն ժամանեալ ելաք իջմամբ Որդւոյն Աստուծոյ առ մեզ:

Ի վեցերորդ աւուր արարչութեան ստեղծ զԱդամ. մեծ եւ պատուական, որ է պատկեր Աստուծոյ եւ յերեւելեաց եւ յաներեւութից գոյացեալ յերկրային եւ յերկնային, ժամանակեա եւ անմահ եւ ձեռամբ Աստուծոյ պատուեալ, ըստ Աստուածաբանի ծաղկազարդ վարդապետութեան իբրեւ աշխարհ իմն երկրորդ ի փոքու զմեծն ի վերա երկրի կացուցեալ թագաւոր ի վերա երկրի ընդ թագաւորութեամբ վերնոյն, միջոց մեծութեան եւ խոնարհութեան: Եւ մի՛ որ սխրասցի, թէ ի վերջո զմարդն գոյացեալ, քանզի պարտ էր նախ թագաւորութեան գոյանալ եւ ապա զթագաւորն ի ներքս մուծանել, որով զղբախտն ընկալաւ պատիւ եւ զանմահ պտղոցն վայելումն գործել միանգամայն եւ պահել եւ ի միոյն հրաժեշտ տուեալ, զի ծանիցէ, թէ Տէր ունիմ զբոլորիցն Աստուած եւ զիւր չափն ծանիցէ երանաւետ եւ մշտապայծառ հայել ի հրեղինացն դասն: Եւ կառավարէր մարդկային բնութիւնս անհոգ եւ անաշխատ եւ անցաւ եւ անտրտում եղեալ ի ցանկալի դրախտին ինքնիշխանութեամբ պատուեալ: Զի իցէ առողին բարին ոչ ինչ նուազ քան զտուողին սերմանս գերաշխարհիկ անմարմնոցն դասուցն պետութեանց ազնուական հարազատութեամբն զուարճացեալ պերճանայր: Եւ նախանձու բանսարկուին եւ կնոջն դաւաճանութեամբ ճաշակեաց զոչ հրամայեալն: Եւ իսկոյն մերկացաւ յաստուածային փառացն ի լուսատեսակ պատմութեանն եւ մաշկատեսակ եղեւ, զթանձրագոյն եւ զընդդիմահար մարմինս զգեցաւ եւ փոխանակեաց զփափկութիւն, զոր ունէր ի Քրիստոս ընդ յերկիրս նզովից, որում փուշք եւ տատասկ, եւ քիրտն երեսաց եւ դառնալ ի հող: Վասն այսորիկ աւաղական բանի ողբայր զմարդկային բնութիւնս. աւա՛ղ իմոյ տկարութեանս, քանզի իմ է նախահաւրն, եւ զպատուիրանն մոռացաւ, եւ պարտեցաւ դառնութեան ճաշակաւն եւ ի կենաց փայտէն եւ յԱստուծոյ արտաքս անկաւ եւ զապականութիւն ժառանգեաց եւ մեղքն հոսեցաւ ի բնութիւնս մարդոյն եւ կապեցաւ ի լուծ ստրկութեան աշխարհիս, զոր Բանն Աստուած եկեալ բաշխեաց միութեամբ մարմնոյն, որ հայրական խնամովն առաքեցաւ Միածինն բառնալ զյանցանս որդւոց մարդկան.

Այս է մեզ տաւն. զայս տաւնեսցուք զգալուստն Աստուծոյ առ մարդիկ, զի առ Աստուած երթայցենք կամ ելանիցենք:

Եւ դարձեալ վեցերորդին խաբեալ էր յերկիր անիծից եւ ի նոյն վեցերորդ աւուրն, զկնի ինն հարիւր եւ երեսուն ամի, եղաւ ի հող, ուստի առեալ էր: Մեռաւ Ղազար

³⁹ Զաք. Դ 7:

⁴⁰ Երգ Բ 8:

⁴¹ Ղուկ. Ժ 19:

Ադամայ եւ ադամեանց նոյն արինակաւ չորեքարեա եւ ի չորից տարբերութեանց:

Ի վեցերորդ աւուրն ստեղծումն մարդոյն, որ է ուրբաթ, բայց աստ ի յուրբաթացեալ դարիս Ստեղծիչն նորա առ մի մի ար հազար ամ եղեալ ոչ մարդ ստեղծանէ իբրեւ զառաջինն, այլ՝ Ինքն իսկ Էն Աստուած եղեւ մարդ, որպէս Ինքն կամեցաւ ի յարգանդի Կուսին եւ ծնեալ ի նմանէ անապական մարմնով յայտնեցաւ մեզ արեգակն արդարութեան: Եւ կամեցաւ կատարել զգործս արարչութեան իւրոյ, զոր սկսաւ ի սկզբանէ յաղագս փրկութեան մարդկան: Եւ աւարտեալ կատարեաց ի վեցերորդ դարուս ի ձեռն կամաւոր խաչելութեան իւրոյ: Եւ դարձեալ ի վեցերորդ ի Խաչի եւ բազում մեռեալք յարուցեալ մտանէն ի քաղաքն՝* արինակ Ադամայ եւ ամենայն ննջեցելոց: Կոչեաց զՂազարոս չորեքարեա ի մեռելոց, զի ցուցցէ, թէ Ինքն է Ստեղծիչ Ադամայ, որ ձայնեացն Ղազարոս բոլոր բնութեան բանական կենդանեացս ադամային տոհմս կոչեցան^{18*} արտաքս ի մահուանէ ի կեանս, ի խաւարէ՝ ի լոյս, ի կորստենէ՝ ի գիտս ճշմարտութեան: Արդ, թեպէտ եւ ասի յաւանդութենէ աւուրս յայտնութեան լինել զյարութիւն Ղազարոս, այլ ստուգապէս եւ խորհրդաբար ի վեցերորդի աւուրն եղեալ են յընթերցուածին զյարութիւն Ղազարոս, զի երեւեցի ծնեալն ի Կուսէն, եթէ Յիսուս Քրիստոս է ճշմարիտ Փրկիչ առաջին Ադամայ, եւ նոյն ինքն եկն ի կեցուցանել զմեզ: Վասն այսր վեցերորդ աւուր կանոնն Ղազարոս յարութեան, Սաղմոս. «Տէր հաներ ի դժոխոց զանձն իմ»⁴², եւ առաքեալ. «Ոչ կամիմ, եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն»⁴³, Աւետարան. «Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս»⁴⁴: Այսու յայտ առնէ, թէ ընդ Ղազարոս կենդանացեալք էաք ամենայն ադամայինքս առ հաւատչելի կոչողին ձայնիւ: Վասն այսորիկ ի վեցերորդի տաւնիս կանոնեալ է եւ յայտ արարեալ, թէ ծնեալն ի Կուսէն Քրիստոս յաւուրն վեցերորդի գործոց, որ է Ադամ, նորա աղագաւ հանդերձեալ է մեռանիլ ի վեցերորդում ուրբաթի:

Եւ յանգեաւ Աստուած յաւուրն եւթներորդի յամենայն գործոց իւրոց, զոր սկսաւ առնել, զի ամենայն աւուրք նորա արարչութեամբ լի են: Վասն է՝ զեւթներորդ արւն միայն արինեաց, վասն զի եւթներորդ արեւնս դնելոց էր՝ ասելով մարդոյն, թէ՝ «Հանգիցես յամենայն գործոց քոց»⁴⁵: Եւ զինքենէ ասէ, թէ՝ «Հանգեաւ Աստուած յամենայն գործոց իւրոց»⁴⁶: Եւ դարձեալ, զի զայլ աւուրսն արարչութեամբն պատուեաց զառաջին արւն հաստատութեամբն, եւ ջրեղէն յարկաւն եւ կամարածեւ խորանաւն: Իսկ վեցերորդ արւն բաժանեալ զջուրն ի ջուրցն եւ երեւեցաւ գունակ գունակ եւ զանազան անուշահոտ ծաղկաւք գեղեցկութեամբ, եւ ծառք պտղաբերք եւ տունկք գեղաշուք^{19*} եւ բազմազան բողբոջաւք^{20*}, եւ դրախտին փափկութիւն անուշ

* Տե՛ս Մտթ. Ի՛նչ 52-53:

18* **Բառս կրկնում է:**

42 Հռովմ. ԺԱ 25:

43 Հռովմ. ԺԱ 25:

44 Յովհ. ԺԱ 1:

45 Ելք ԼԴ 21, ԼԵ 2:

46 Ծնդ. Բ 3:

19* գեղաշուք:

20* բողբոջաւք:

հոտով բուրաստանին: Իսկ զշորորդն լուսաւորաւքն զարեգակն ճառագայթիւք եւ զլուսին բոլորակաձեւ կարակնահաս լուսովն եւ զաստեղացն ճախրումն վայելչութեամբ: Իսկ զհինգերորդն կիտաւք մեծամեծաւք եւ ձկամքք^{21*} եւ թռչնաւք, զորս ի ջուրսն յարինեաց: Իսկ ի վեց աւուրն ստեղծ զմարդն: Եւ այսպէս զեթներորդն հանգստեամբ պատուեալ փառաւորեաց, որ է պատկեր եւ արինակ հանդերձեալ կենացն, յորում հանգուցանէ զամենայն սուրբս եւ զսիրելիս անուան իւրոյ ի յարկսն լուսեղէն՝ ասելով. «Եկայք արինեալք Հաւր իմոյ»⁴⁷: Զի Աստուածն յախտենից ոչ աշխատեսցի եւ ոչ գոյ քննութիւն ի գործս Նորա, այլ ի կամս արդարոցն եւ սրբոցն հանգչի: Եւ Քրիստոս ասաց. «Մի՛ եղիցի փախուստն ձեր ի ձմերայնի»⁴⁸, որ զմեղս նշանակէ, վասն զի եթներորդ արն շաբաթ, ըստ եբրայեցոցն Հանգիստ ասի: Եւ շաբաթն զծանրութիւն մեղացն, որ հրեայքն դատարկ եւ անգործ կացին: Այսպէս եւ մեղաւորքն ծանրութեամբ մեղացն ոչ կարեն թռչել, այլ անշեջ հուրն շրջապատէ եւ խորովէ: Եւ ոչ ուրեք լեալ ի մարդկանէ հանգիստ Աստուծոյ խորհուրդ էր Աստուծոյ վասն առաջին Ադամայն, զոր ստեղծ ի վեցերորդ դիմաց աշխարհի՝ հանել վերացուցանել աստի ի բարձրագոյն փառսն եաւթնեկին^{22*}, որ է անճառելի ծագումն ճշմարիտ լուսոյ միասնական Երրորդութեան: Այս լինէր ի պահել պատուիրանին Տեառն: Եւ ահա, ի հանցանելն Ադամայ, խափանեցաւ առժամայն խորհուրդն Աստուծոյ, զոր ունէր վասն Ադամայ, եւ փոխանակ հանգստեանն Աստուծոյ, աշխատութիւն մատուցաւ, եւ, փոխանակ արինութեան, զանէծս ընկալաւ, եւ, փոխանակ ի Սրբութիւն սրբութեանցն մտանելոյ, յազգի յանցանս շաղախեցաւ բնութիւն մարդոյ: Վասն որոյ ոչ Աստուած ըստ մեղաց մերոց արար, այլ ըստ անսպառ գթութեան ողորմութեան Իւրոյ՝ երկրորդ արարչութիւն ի ձեռն առեալ բարձրագոյն քան զառաջինն, զի մի խորհուրդ բանսարկուին կացցէ, որ վասն կորստեան մարդոյն: Այլ խորհուրդն Աստուծոյ կացցէ, մնացցէ, որ վասն փրկութեան մարդկան, եւ ի մեծագոյն պատիւ փառացն տարեալ հանէ զմարդկային բնութիւնս առաւել պայծառագոյն քան զառաջինն: Վասն այն եաւթներորդում^{23*} աւուրն հրամայի կանոնն կատարել ի սուրբ Գողգոթա, որ է տեղի խաչելութեան Տեառն մերոյ: Եւ յոյժ խորհրդական է տեղի սպանման Տեառն՝ Գողգոթա: Գողգոթա^{24*} ասի եւ՝ տեղի կառափելոյ, եւ՝ զագաթն՝ զլուխ եկեղեցւոյ, եւ՝ ի Խաչն բարձրանալոյ: Եւ զի ի վերայ գագաթանն Ադամայ Խաչն կանգնեցաւ^{25*}. Ո՛վ խորհրդոյն զարութիւն, ո՛վ չարչարանք չարչարեցելոյն Աստուծոյ, որ ի չարչարանաց փրկեաց զմեզ չարչարանաւք: Զի անդ կատարեցաւ գործ երկրորդ արարչութեանս, զի առաջին արարչութեան Մովսէս վկայեաց ասելովն՝ «Կատարեցան երկինք եւ երկիր եւ ամենայն զարդ նոցա: Եւ հանգեաւ Աստուած յաւուրն եւթներորդի եւ սրբեաց եւ արինեաց զնա»⁴⁹: Բայց աստ ոչ մարդ ոք նմանեալ Մովսէսի, այլ Ինքն իսկ Աստուած

21* ձկամք:

47 Մտթ. ԻԵ 34:

48 Մտթ. ԻԴ 20:

22* արթնեկին:

23* յաւթներորդ:

24* Գողգոթն:

25* կանկնեցաւ:

մարդացեալ վկանաց, յորժամ ի Խաչ անդր բարձրացաւ ասելով. «Ամենայն ինչ կատարեալ է»⁵⁰, այսինքն՝ զոր ինչ խորհեալ էի վասն կենաց եւ փրկութեան մարդկան, արդ, կատարեցի յելանելս իմում ի Խաչ: Արդ, գորարինակ մեծ է Աստուած քան զմարդ, այնչափ մեծ են գործք երկրորդ արարչութեանս, որոյ կատարումն Խաչն է: Եւ աստ զեալթն ^{26*} ար տաւնիս չարչարանաց Տեառն կատարեմք: Եւ կարի ի դէպ: Զի զհանգիստն եւթն դարուն նշանակէ, եւ ի չար գործոց մերոց հանգիստ խաչելութեամբ Քրիստոսի ի Գողգոթա եղեւ: Եւ հանգեաւ ճշմարտապէս ի մարդագոհութենէ երկիր յուստերաց եւ ի դստերաց մարդկան՝ յելանելն Իւրում ի Խաչ վասն մեր: Եւ այս է ար. Է (եւթներորդ), յորում սրբութիւն արար մեղաց մերոց եւ հանգիստ յառաջին աշխատութեան, եւ արինեաց յառաջին անիծիցն՝ եղեալ վասն մեր անեծք նոյն Ինքն, որ արինութիւն է ամենայն արինութեանց ի շաբաթն, յորում հանգեաւ Աստուած. Յիսուս է, որ կատարեաց զկամս Հար իւրոյ, մահու Խաչի համբերեաց վասն մեր մարմնով, որպէս վկայէ առաքեալ, թէ՛ «Ի նմա միացեալ է լրումն Աստուածութեան»⁵¹: Մի Տէր Յիսուս Քրիստոս աստ չարչարեցաւ ի Գողգոթա, եւ զեւթնեակ կենցաղս չարչարանաւք մեզ իւրաքանչիւր սահմանեաց մինչեւ ժամանեցուք ի յութեորդն, որ է ար յարութեան: Արդ, զի աստ բացաւ մեզ մուտ արքայութեան, զի ընդ մեզ միացաւ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ դուռն կենացն, որ ասաց, թէ՛ «Ընդ իս ոք մտցէ եւ ելցէ»⁵² յայտ արար, թէ յեւթներորդիս չարչարանոք ոք կրթի՝ մտանէ ի շաբաթն մեծ, որ է արքայութիւն Աստուծոյ. ոչ եւթնեակ, այլ ութնից տալ մասունս, ոչ եւթնեակն, այլ ութնիցն, որպէս առակողն հրամայէ*, զի որ ի Գողգոթա չարչարեցաւ եւ երարց զմեղս ամենեցուն, զոր եալթնեորդումն ^{27*} գործեցին, զի եալթամբ ^{28*} հոլովի կենցաղս: Եւ որ աստ խաչեցաւ զեւթնեակի շնորհս բաշխեաց ի բանալ կողիցն տիգաւ: Եւ եթէ ո՞վ է խաչեալն, զայս ուսուցանէ սաղմոսն եւ ընթերցուածն, զի վասն Քրիստոսի Աստուածութեան աստուածաբանութիւնք են եւ եկեղեցւոյ աւետիք ամենայն ասացեալքն, վասն որոյ աւուրն սաղմոսն հրամայէ. «Աւետարանեցէք ար ըստ արեւ զփրկութիւն Նորա»⁵³, եւ դարձեալ, թէ՛ «Թագաւորեաց յաղթութեամբ Խաչին», եւ ապա աւետիս առձայնէ. «Ուրախ լիցին երկինք», այսինքն՝ ի հաւատս ճշմարտութեան, «Յնծասցէ երկիր»՝ գործք արդարութեան, «Զուարճասցի ծով լրի իւրով»⁵⁴ աւագանն մկրտեցելովք իւրովք, «ծառք անտառի»^{29*,55} Խաչն ի Գողգոթա եւ յամենայն տիեզերս, զի գա յառաջին գալուստն խոնարհութեամբ եւ գա միւս անգամ ահաւորութեամբ՝ դատել զերկիր: Եւ առաքեալ. «Զծնեալն ի զաւակէ Դաւթի ըստ

⁵⁰ Յովհ. ԺԹ 30:

^{26*} զալթն:

⁵¹ Կողոս. Բ 9:

⁵² Յովհ. Ժ 9:

* Տէ՛ս Ժող. ԺԱ 2:

^{27*} յալթնեորդումն:

^{28*} ալթամբ:

⁵³ Մաղ. ՂԵ 2:

⁵⁴ Մաղ. ՂԵ 11:

^{29*, 55} անդառի:

մարմնոյ»⁵⁶ մարգարէիցն նախագուշակութեամբ սահմանեալ Որդւոյն Աստուծոյ. ի զաւրութենէ սքանչելեացն ըստ Հոգւոյն սրբութեան, զոր եհեղ ի հաւատացեալսս ի յարութենէ մեռելոց, զի յարուցեալ եւ ընդ նմին յարոյց զմեզ: Այսպէս եւ միւս սաղմոսն յայտնէ զՔրիստոսի թագաւորութիւն ի ծագաց մինչեւ ի ծագս երկրի, «որում երկիր պագեն ամենայն թագաւորք երկրի եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա»⁵⁷: Եւ աշխարհագրութեան Աւետարանն, յորում ծնաւ Քրիստոս, որ յերկինս գրեաց զմեզ, որպէս Աստուածաբան ասէ. «Յաշխարհագրէն պատկառեա, որով դու յերկինս գրեցար»⁵⁸: Եւ արդ, ահա յայտ է, թէ ամենակալն Աստուած մարդացաւ եւ եմուտ ի գիր աշխարհակալ թագաւորին՝ ծնանելով ի սուրբ Կուսէն եւ ապա եմոյծ զմեզ ի գիր կենացն յաւիտենից՝ ոչ մրով գրեալ, այլ՝ արեամբ ի Խաչին, զի աստ եղաւ գիր եռակի ի վերա Խաչին՝ վկայելով զնա Թագաւոր, եւ եւ հաւատաց եկեղեցի մի յերրորդութենէն զԽաչեալն: Եւ աստ ցուցանէ, եթէ Աւգոստոս կայսր զիւր պատկերն գրէր ի դրամն եւ Քրիստոս զիւր պատկերն՝ ի մարդն, որպէս ասաց. «Տուք զկայսերն կայսեր, զԱստուծոյն՝ Աստուծոյ»⁵⁹ մարդն դրամ եւ դրամն մարդ վերծանութեամբ:

Ութերորդ աւուրն կանոն ի Յարութեան կատարի, զի զկնի ութներորդ դարուն հանգստեան ի յերկրի արքայութիւն, քանզի արքայութիւն ասի, որպէս Քրիստոս ասաց, թէ «Մերձեալ է արքայութիւն»⁶⁰. Եւթներորդ արքայութիւն ասաց վասն Իւրոյ զալստեանն, քանզի Քրիստոս զյարութիւն արքայութիւն անուանեաց, որպէս ի յայլակերպութեան զարքայութիւն եցոյց Իւրոց աշակերտացն ասելով. «Ոչ տեսանիցէք զմահ մինչեւ տեսանիցէք զարքայութիւն»⁶¹: Եւ յորժամ ասաց, թէ՝ «Փոքրիկն յարքայութեան մեծ է»⁶², եւ «Մինչեւ արբից զնա նոր յարքայութեան Հաւր իմոյ»⁶³: Այս վկայութիւն վասն փրկութեան մերոյ հազարամեան արքայութեան: Թեպէտ եւ արքայութիւն անուանի արքայութիւն Քրիստոսի, բայց տակաւին ի յերկրի եմբ: Իսկ ի կատարման աշխարհիս եւթներորդ դարուս ութներորդ հանգիստն երկնից արքայութիւն ութներորդ արքայութեան աշխարհին սկիզբն եւ առաջին լինի, որ ոչ երեկոյանա, այլ մնա մշտնջենաւոր եւ յարակա յարաձգական յաւիտենիւ. այս խորհուրդ ութներորդին: Իսկ ի սուրբ Յարութեան կատարեալ զպաշտան կանոնին, քանզի յութերորդին յարեաւ Քրիստոս յաւուր կիրակէի, եւ վերջին կիրակէն միաշաբաթի: Այսպէս եւ յարութիւն մեր ի յանդերձեալ ութներորդին զկնի եւթնարեա* աշխարհիս համարէն յարութիւն մարդկան եւ անգրաւ յաւիտենին մուտ կիրակէն է, որ թարգմանի տերունեան: Արդարեւ տերունական է, վասն զի Ինքն է Արարիչ եւ Ինքն է Փրկիչ եւ Ինքն է Տուիչ արքայութեան: Նոյն խորհուրդ յարութեան վասն անձեռագործ թլ-

⁵⁶ Հռովմ. Ա 3:

⁵⁷ Մաղ. ՀԱ 11:

⁵⁸ Տե՛ս «Գրիգորի աստուածաբանի Անձիանձու եպիսկոպոսի՝ Խաւսք ի Ծնունդն Քրիստոսի», ՄՄ, ձեռ. N 1500, թ. 724բ-27ա:

⁵⁹ Մտթ. ԻԲ 21:

⁶⁰ Մտթ. Գ 2, Դ 17:

⁶¹ Մտթ. ԺԶ 28 Մրկ., Ը 39, Ղուկ. Թ 27:

⁶² Մտթ. ԺԱ 11:

⁶³ Մտթ. ԻԶ 29:

* յոթնարեա:

փաստության մերոյ, այսինքն՝ Քրիստոսի մկրտության մասին, որով թլփատիմք եւ մերկանամք զհին մարդն գործովքն եւ զգենումք զնորն նորոգեալ գիտութեամբ, որպէս ընթերցուածն ասէ. «Թաղեալք ընդ նմին մկրտութեամբն ի մահ»⁶⁴, որով եւ ընդ նմին յարութիւն մեզ, ըստ Քրիստոսի թաղմանն եւ յարութեան: Իսկ ութնաւրեա թլփատութիւն ի նոյն ար ծննդեան՝ այն զանձեռագործ թլփատութիւն մեր հոգեւոր, յորում ճշմարիտ թլփատիմք՝ ի բաց կտրելով զաղտ բնութեան մարմնոյս հոգով եւ մարմնով, եւ ամենայնն ի մի եւ ի նոյն խորհուրդ ժողովի ութնաւրեա թլփատութիւն Քրիստոսի, եւ յութեւորդին ի բաց կտրելով զվատթարն ի պատուականէն՝ բառնալով զմահ եւ զապականութիւն, եւ նոյն լինի մերձենալովն առ Աստուած, եւ աստուածանա ըստ անսուտ բանին Աստուծոյ: Իսկ մկրտութիւն եւ թլփատութիւն ի միում աւուր. մկրտութեան կարգ զաստի մաքրութիւնս ցուցանէ, իսկ թլփատութիւն՝ զանդր հատուցմանն վճիռ, որ լինի յարութիւն յութեւորդին մտանելով: Վասն այսորիկ սուրբ յարութեան եկեղեցոյ կատարի կանոն: Իսկ Աւետարանն, «իբրեւ լցան աւուրք ուր»⁶⁵. զի եւ արեւնքն հրամայէր զբնութեան սրբութիւն պահել՝ ութն ար ի վեր ճանապարհ առնելով պղծելոց մարդոց ի Սրբութիւն սրբութեանցն հանդերձեալ ութներեկին: Իսկ Քրիստոսի թլփատութիւն վասն աւետեացն Աբրահամու լնոյ: Իբրեւ լցան աւուրք ուր թլփատեաց Զաքարիա զՅիսուս սակաւիկ մի: Թեպէտ եւ այնքան բարձրագոյն աւետարանի վասն նորա Կուսին ի հրեշտակէն եւ յեղիսաբեթէ եւ ի հովուացն: Սակայն ոչ արգելոյր զնոսա զարեւսն կատարելոյ, զոր բնութեամբ ունէին ժողովուրդն, արեւնքն հրամայէր զբնութեան սրբութիւն պահել: Եւ այս յայտնի ցուցեալ է ի սուրբ հարցն ի բազում տեղիս, զի Աբրահամու ետ զնա դրոշմ եւ զաւակաց նորա՝ որոշեալ զնոսա ի հեթանոսաց, եւ եղիցի կնիք հաւատոց արդարութեան: Դարձեալ զաւելորդ մորթն ի բաց հերձեալ ուսուցանէ՝ ի բաց հանել զչարութիւն, իսկ Քրիստոս՝ սպասաւոր թլփատութեան լինել՝ առ ի հաստատուն առնել զաւետիս հարցն, ըստ առաքելոյ թլփատութիւն միայն նշանակէր, որ ճանաչիւր զաւակ նոցա ի մէջ հեթանոսաց, նշանակաւս այսուիկ յայտնի լինէր, թէ ծառայք են մեծին Աստուծոյ: Եւ ահա տես, յորժամ ոչ էին ի մէջ հեթանոսաց զամս քառասուն ոչ թլփատեաց զնոսա: Իսկ Աբրահամ, որ երդմնեցոյց ի Տէր Աստուած երկնի եւ երկրի, եւ վասն էր՝ յերանսն. մի այս է պատճառ. «Որ երդնու ի տաճարն՝ երդնու ի բնակիչս նորա»⁶⁶, որ ի Քրիստոս հայի խորհուրդն: Եւ երկրորդն, քանզի ի թլփատութիւն երդնուին եւ երրորդ պատկառեցուցիչ է անձամբ: Նոյն եւ չորրորդ յերանս իւր ետ երդումն Աբրահամ ծառային վասն Բսահակայ որդւոյ իւրոյ, զի յերանս անդ հաստատեալ կայր ուխտն Աստուծոյ, զի ուխտ յաւիտենից էր վասն զաւստեանն Քրիստոսի, զի սակաւիկ մի ազատեցին նոքա ի ծառայութենէ մինչեւ զա Քրիստոս, որ ի ձեռն նորա դարձեալ հնազանդեցին միւս անգամ հեթանոսք մինչեւ յաւիտեանս ժամանակաց կամ զի յերկանաց անդի ծնանելոց էր Բսահակ, յորմէ ծնանելոց էր Տէր մեր: Իսկ Յիսուս յանձն առնու զայն ըստ արիւնացն, զի լցցէ զնա, եւ ապա լուծանէ զնա, զի ոչ հրաժարէր նա յԻւր աւանդեալ արիւնացն, զի մի՛ պատճառս տայցեն, որք չար ասեն զարեւսն: Եւ Յիսուս ելից զարեւսն բարի, զոր

⁶⁴ Հռովմ. Զ 4:

* Ստթ.ԻԳ 21:

առ Յովհաննէսն ասաց. «Այսպէս պարտ է լնուլ զամենայն արդարութիւն»⁶⁵: Արդ, լնուլ զաւրէնսն, զի բարի է տղայոց, ըստ ժամանակին: Եւ փոխէ զնա ոչ վասն չարութեան, այլ վասն տկարութեան, եւ տաւ արէնս կատարեալ արանց կատարելոց, եւ փոխանակ կաթին եւ մեղու տղայոց մարդկան՝ խաչ եւ չարչարանք կատարելոց ի Քրիստոս: Կոչեցաւ անուն նորա Յիսուս, որպէս ասացաւ ի հրեշտակէն մինչ չեւ յղացեալ էր զնա յորովայնի: Այս խորհուրդ արինակաց կատարեցաւ ի ձեռն Յեսուայ համանունան Յիսուսի, զի նա նախ մկրտեաց զԻսրայէլ յանցանել ընդ Յորդանան եւ ապա թլփատեաց զնոսա գայլախագիւ: Զի ամենայն նիւթք ընդ գործով արուեստիւ անկան ճարտարաց, զի այն նիւթք ընդ գործով արուեստիւ ոչ անկանի, բայց միայն գայլախագն մնաց անգործ ի բազմաց^{30*} մոլորութենէ պատկերագործութեան: Պղծեցին զամենայն նիւթք առաւել՝ զերկաթ: Իսկ գայլախագն վէմ է՝ արինակ Քրիստոսի ճշմարիտ վիմին, որ անգործ է ի չարեաց. վասն արինակ լինելոյ Քրիստոսի, որ «ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա»⁶⁶: Որպէս ասաց. «Գայ իշխան աշխարհիս այսորիկ եւ յիս ինչ ոչ գտանէ յիւրոցն»⁶⁷: Եւ նովաւ թլփատեցաւ զանձեռագործ թլփատութիւն: Եւ դարձեալ թլփատելոց եմք, յորժամ անցանեմք ընդ Յորդանան կենցաղոյս՝ մտանել յերկիրն կենդանեաց, որ է երկինք՝ բնակութիւնք հրեշտակաց: Եւ նախ Յիսուս մկրտեցաւ աւագանաւն, եւ ապա յայնժամ թլփատէ զմեզ Քրիստոս յաւուրն ութներորդի յարութեան, զոր իմանալի վէմն Քրիստոս հոգով շրթամբք Իւրովք սատակեցէ յասելն. «Երթայք ի հուրն յաւիտենից, ոչ զհտեմ զձեզ»⁶⁸: Իսկ թլփատեալքն, այսինքն՝ մկրտեալքն յեւթներորդիս, որք զհին մարդն մերկացան եւ խայտառակեցին զիշխան աշխարհիս այսորիկ, ի յարութեան ընդ յարուցելոյն Քրիստոսի յայտնին փառաւր:

Հրատարակւոյթյան պատրաստեց

Հ. Քոսեյանք

⁶⁵ Մտթ. Գ 15:

^{30*} բազմամ:

⁶⁶ Մաղ. ԺԱ 2:

⁶⁷ Յովհ. ԺԴ 30:

⁶⁸ Մտթ. ԻԵ 41: